

Փոքր հայցապահանջների դատարանի ուղեցույց.
Ինչպե՞ս դատական գործ հարուցել, եթե
մասնավոր առևտրային կազմակերպությունը կամ
անշարժ գույքի սեփականատերը Ձեր հանդեպ
խտրական վերաբերմունք է դրսևորում Ձեր
հաշմանդամության պատճառով:

Յրապ. #5206.10 - Armenian
Յոկտեմբեր, 2015թ.



Բովանդակություն

Ինչո՞ւ օգտվել փոքր հայցապահանջների դատարանից՝ խտրական վերաբերմունքի մեղադրանքով դատական գործ հարուցելու համար:.....	1
Ո՞ր օրենքներն են ինձ պաշտպանում:	1
Ի՞նչ տեսակի պատշաճ հարմարություններ պետք է կատարեն առևտրային կազմակերպությունները:	6
Չանրային առևտրային կազմակերպության կողմից օրինակա՞ն է իմ հաշմանդամության պատճառով իր ապրանքները և ծառայությունները ինձ տրամադրելը մերժելը:	9
Ինչպե՞ս հայց հարուցել:.....	14
Իմ գործով ո՞վ է հանդիսանում Պատասխանողը:.....	16
Ինչպե՞ս պատրաստվել դատաքննությանը:.....	23
Լսումից հետո.....	26
Չավելյալ օգնության կարիք ունե՞ք:	27

**Փոքր հայցապահանջների դատարանի ուղեցույց.
Ինչպե՞ս դատական գործ հարուցել, եթե մասնավոր առևտրային
կազմակերպությունը կամ անշարժ գույքի սեփականատերը Ձեր
հանդեպ խտրական վերաբերմունք են դրսևորում
Ձեր հաշմանդամության պատճառով**

Ինչո՞ւ օգտվել փոքր հայցապահանջների դատարանից՝ խտրական վերաբերմունքի մեղադրանքով դատական գործ հարուցելու համար:

Եթե մասնավոր առևտրային կազմակերպությունը կամ անշարժ գույքի սեփականատերը խտրական վերաբերմունք են դրսևորում Ձեր հանդեպ Ձեր հաշմանդամության պատճառով, Դուք կարող եք նրանց դեմ դատական գործ հարուցել դաշնային կամ նահանգային դատարանում կամ Դուք կարող եք վարչական հայց ներկայացնել դաշնային կամ նահանգային գործակալության միջոցով: Բայց, եթե Ձեր հայցը 10,000 ԱՄՆ դոլար կամ ավելի պակաս գումարի հայցային պահանջ է պարունակում, Դուք կարող եք դատական գործ հարուցել փոքր հայցապահանջների դատարանում:

Փոքր հայցապահանջների գործընթացն արագ և էժան է: Կանոնները պարզ և ոչ պաշտոնական են: Եվ Դուք փաստաբանի կարիք չունեք:

Օգտվեք այս գրքուկից՝ տեղեկություններ ստանալու հետևյալի մասին՝

- Ո՞ր օրենքներն են Ձեզ պաշտպանում:
- Ինչպե՞ս դատական գործ հարուցել փոքր հայցապահանջների դատարանում:
- Դատական այն ձևաթղթերը, որոնց կարիքն ունեք փոքր հայցապահանջների գործի համար:

Ո՞ր օրենքներն են ինձ պաշտպանում:

Կալիֆորնիայի օրենքի համաձայն եթե հանրային առևտրային կազմակերպությունը, ինչպես օրինակ ռեստորան, հյուրանոց կամ բժշկի գրասենյակ, խտրական վերաբերմունք է դրսևորում Ձեր հանդեպ Ձեր հաշմանդամության պատճառով, Դուք կարող եք նրանց դեմ դատական գործ հարուցել: Դաշնային օրենքը, որը կոչվում է Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենք (ADA, American with Disabilities Act), նույնպես պաշտպանում է Ձեզ:

Որո՞նք են Կալիֆորնիայի օրենքները:

Գործում են Կալիֆորնիայի երեք հիմնական օրենք, որոնք պաշտպանում են Ձեզ՝

- *Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգրքի* (Ունրուհի քաղաքացիական իրավունքների մասին օրենք) (*California Civil Code [the Unruh Civil Rights Act]*) 51 հոդվածը, որը Ձեզ պաշտպանում է, եթե որևէ ձեռնարկություն Ձեր հանդեպ ավելի վատ է վերաբերվում, քան ոչ հաշմանդամների հանդեպ:¹
- *Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգրքի 54.1 հոդվածը* (*California Civil Code*) պաշտպանում է Ձեզ, եթե առևտրային կազմակերպությունը դժվարացնում է Ձեր մուտքը հանրային վայրեր կամ դրա մոտակայքը հասնելը (օրինակ ոչ մատչելի դուռը կամ գուգարանը): Այս հոդվածը նաև պաշտպանում է Ձեզ, եթե առևտրային կազմակերպությունը խանգարում է Ձեզ օգտվել ապրանքներից կամ ծառայություններից՝ Ձեր հաշմանդամության պատճառով: *Օրինակ՝* թույլ չի տալիս Ձեզ օգտվել Ձեր ծառայություն տրամադրող կենդանուց կամ Ձեզ չի տրամադրում այն ծառայությունը, ինչ որ մնացած հաճախորդներն են ստանում: Այս հոդվածը նաև անշարժ գույքի սեփականատերերին և բնակավայրեր տրամադրողներին թույլ չի տալիս խտրական վերաբերմունք դրսևորել Ձեր հանդեպ՝ Ձեր հաշմանդամության պատճառով:²
- *«Արդար աշխատանքի և բնակարանաշինության մասին օրենքը»* (FEHA, Fair Employment and Housing Act), անօրինական է համարում ցանկացած սեփականատիրոջ կողմից որևէ մեկի դեմ ցուցաբերած խտրական վերաբերմունքը կամ հետապնդումը ռասայի, գույնի, կրոնի, սեռի, սեռական կողմնորոշման, ազգային պատկանելության, նախնիների, ընտանեկան կարգավիճակի, եկամտի աղբյուրի կամ հաշմանդամության պատճառով:³

¹ Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգրքի § 51, *և հետևյալը* [«Վերադառնալի հիմնական փաստաթղթին»](#)

² Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգրքի § 54.1 [«Վերադառնալի հիմնական փաստաթղթին»](#)

³ Կալիֆորնիայի Պետական օրենսգրքի (California Government Code) § 12955 [«Վերադառնալի հիմնական փաստաթղթին»](#)

Դուք կարող եք դատական գործ հարուցել հանրային առևտրային կազմակերպության կամ այլ կազմակերպության դեմ կամ բնակարանային մատակարարի (կամ նրա աշխատակցի) դեմ՝ այս օրենքները խախտելու համար:

Որո՞նք են դաշնային օրենքները:

ADA, մասնավորապես բաժին III-ը, թույլ չի տալիս առևտրային հանրային կազմակերպությանը (ինչպես օրինակ ռեստորանները, հյուրանոցները, մթերային խանութները, մանրածախ առևտրով զբաղվող խանութները և մասնավոր սեփականություն հանդիսացող տրանսպորտային կազմակերպությունները) խտրական վերաբերմունք դրսևորել Ձեր հանդեպ՝ Ձեր հաշմանդմության պատճառով: ADA-ի III բաժինը նաև պահանջում է, որ այդ առևտրային կազմակերպությունները մատչելի լինեն հաշմանդամ մարդկանց:⁴ ADA-ի II բաժինը նմանատիպ պահանջներ ունի նահանգային և տեղական կառավարական մարմինների ծառայություններից և հաստատություններից:⁵

Արդար բնակարանաշինության մասին օրենքը (FHA, Fair Housing Act) պաշտպանում է խտրականությունից տուն վարձելիս և գնելիս:⁶ FHA-ը սահմանում է, որ այդ խտրականությունը ներառում է կանոններում, գործելակերպերում կամ ընթացակարգերում պատշաճ հարմարություններ կատարելը, երբ անհրաժեշտ է հաշմանդամ մարդուն հավասար հնարավորություններ ընձեռել՝ օգտվելու բնակարանից և վայելելու այն:⁷ Նույն ձևով FHA-ը պահանջում է անշարժ գույքի սեփականատերերից շինությունում և կանոններում պատշաճ փոփոխություններ թույլատրել (երբ անհրաժեշտ է նման հավասար հնարավորություն տալ՝ օգտվելու բնակարանից և վայելելու այն):⁸

⁴ 42 ԱՄՆ օրենսգիրք (U.S.C., United States Code) §12182 [«Վերադառնալիքի հիմնական փաստաթղթին»](#)

⁵ 42 U.S.C. §12131, և հետևյալը [«Վերադառնալիքի հիմնական փաստաթղթին»](#)

⁶ *Տե՛ս՝* 42 U.S.C. § 3604(c) [«Վերադառնալիքի հիմնական փաստաթղթին»](#)

⁷ 42 U.S.C. § 3604(f)(3)(B) [«Վերադառնալիքի հիմնական փաստաթղթին»](#)

⁸ 42 U.S.C. § 3604(f)(3)(A) [«Վերադառնալիքի հիմնական փաստաթղթին»](#)

Ի՞նչ տեղի կունենա, եթե Կալիֆորնիայում առևտրային կազմակերպությունը խախտի Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքը (ADA):

Կալիֆորնիայի օրենքը Ձեզ թույլ է տալիս դատական գործ հարուցել ADA-ի խախտման դեպքում, թեև ADA-ն դաշնային օրենք է:⁹

Առևտրային կազմակերպությունը խախտում է ADA-ն եթե այն՝

- Ձեզ թույլ չի տալիս հավասարապես և ամբողջությամբ օգտվել իր ապրանքներից, ծառայություններից, հարմարություններից և արտոնություններից. կամ
- ստիպում է Ձեզ օգտվել առանձին կամ տարբեր հարմարություններից (եթե նրանք դա չեն անում՝ համզովելու, որ Դուք ստանում եք այն նույն ապրանքները և ծառայությունները, որոնք առաջարկվում են այլ անձանց). կամ
- օգտվում են այն կապալառուների կամ աշխատակիցների ծառայություններից, ովքեր խտրական վերաբերումք են դրսևորում Ձեր հանդեպ՝ Ձեր հաշմանդամության պատճառով:

ADA-ի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար այցելեք ԱՄՆ Արդարադատության նախարարության կայքէջի ADA-ին վերաբերող էջը՝ (www.ada.gov) կամ դիմեք Disability Rights California-ին:

Կալիֆորնիայի օրենքի համաձայն ի՞նչն է համարվում հաշմանդամություն:

Կալիֆորնիայի օրենքը պաշտպանում է մարդկանց խտրական վերաբերմունքից՝ փաստացի կամ ակնառու ֆիզիկական կամ մտավոր խնդրի պատճառով, որը դժվարեցնում է հիմնական կենսական գործողությունների իրականացումը:¹⁰ Սա ներառում է ֆիզիկական և մտավոր խնդիրներ, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ քրոնիկական կամ հազվադեպ առողջական խնդիրներ, ինչպիսիք են՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ, հեպատիտ, Էպիլեպսիա, ուշաթափություններ, շաքարախտ, կլինիկական դեպրեսիա, երկբևեռ խանգարում, ցրված սկլերոզ և սրտի հիվանդություն:

⁹ Կալիֆորնիայի Զաղաքացիական օրենսգիրք § 54.1 [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁰ Կալիֆորնիայի Պետական օրենսգիրք § 12926(i) և (k). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Առևտրային կազմակերպությունից պահանջվո՞ւմ է ինձ անհրաժեշտ հարմարեցումները կատարել իմ հաշմանդամության պատճառով:

Հնարավոր է: ADA-ի համաձայն հնարավոր է, որ առևտրային կազմակերպությունը պարտավոր է Ձեզ օգնել, Ձեզ սարք կամ տեխնոլոգիա տրամադրի, հեռացնի խոչընդոտները, ժեստերի լեզվի որակավորված թարգմանիչներ տրամադրի կամ իր աշխատանքում փոփոխություններն այնպես կատարի, որ Դուք կարողանաք հավասարապես օգտվել դրա ապրանքներից և ծառայություններից: Բայց օրենքի համաձայն այս օգնությունները և հարմարությունները չպետք է չափազանց թանկ լինեն այն առևտրային կազմակերպության համար, որը հիմնված է կազմակերպության և հնարավոր է մայր կազմակերպության կապիտալի վրա, կամ փոխի առևտրային կազմակերպության հիմնական բնույթը:¹¹ Սակայն, նման իրավիճակների հավանականությունը հազվադեպ է: Հնարավոր է, որ առևտրային կազմակերպությունը պարտավոր չլինի պատշաճ հարմարեցումներ տրամադրել, եթե անձը, ով խնդրում է այդ հարմարեցումները այլ անձանց առողջության կամ անվտանգության համար ուղղակի սպառնալիք է ներկայացնում, որն անհնար է վերացնել կամ նվազեցնել՝ պատշաճ հարմարեցումներ տրամադրելով:¹²

Ես կարո՞ղ եմ դատական գործ հարուցել Կալիֆորնիայի որևէ առևտրային կազմակերպության դեմ:

Այո: Դուք կարող եք դատական գործ հարուցել «ցանկացած առևտրային հաստատության» դեմ:¹³ Սա նշանակում է ցանկացած առևտրային հանրային կազմակերպություն, այդ թվում՝

Ռեստորանները, խանութները, թատրոնները, ATM-ները, գազայցման կայանները

- Հիվանդանոցները, կլինիկաները, բժիշկների և փաստաբանների գրասենյակները

¹¹ 28 Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի (C.F.R., Code of Federal Regulations) §36.104 [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹² 42 U.S.C. § 12182(b)(2)(A)(ii) և (iii), Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգիրք § 51, և հետևյալը [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹³ Կալիֆորնիայի Քաղաքացիական օրենսգիրք § 51(b). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

- Օդանավերը, գնացքները, ավտոբուսները և զբոսանավերը (օդանավերի դեպքում գործում են այլ օրենքներ)
- Մասնավոր դպրոցները, որդեգրման գործակալությունները և այն առևտրային կազմակերպությունները, որոնք հեռախոսային, խուլերի համար նախատեսված հեռահաղորդակցման սարքերի (TDD, Telecommunications device for the deaf) և հեռատիպ տերմինալի միջոցով (TTY, Teletype Terminal) հաղորդակցման ծառայություններ են տրամադրում:
- Առողջապահական ակումբներ, զվարճանքի համար նախատեսված զբոսայգիներ կամ առողջարաններ:
- Հյուրանոցներ, պանդոկներ, մոթելներ կամ կացության այլ վայրեր (բացառությամբ հինգից պակաս սենյակների առկայություն և սեփականատիրոջ այնտեղ ապրելու դեպքերի)

Դուք չեք կարող դատական գործ հարուցել այնպիսի առևտրային կազմակերպության դեմ, ինչպիսիք են մասնավոր ակումբները կամ կրոնական կազմակերպությունները:¹⁴ Սակայն, միայն այն պատճառը, որ ակումբը անդամության պահանջներ ունի, անպայմանորեն այն մասնավոր ակումբ չի դարձնում օրենքի համաձայն: Ընդհանրապես ADA-ից ազատվելու համար, ակումբը պետք է լինի ոչ առևտրային կազմակերպություն, պետք է բաց լինի անդամներին և իրենց հյուրերին և չի կարող հանրային իրադարձություններ հյուրընկալել, ինչպիսիք են մրցաշարերը, համայնքային հարցերին առնչվող իրադարձությունները և քաղաքական դրամահավաքները:

Ի՞նչ տեսակի պատշաճ հարմարություններ պետք է կատարեն առևտրային կազմակերպությունները:

Լրացուցիչ օգնություններ կամ ծառայություններ

Եթե Դուք հաշմանդամություն ունեք, մասնավոր առևտրային կազմակերպությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի՝ Ձեզ հետ այնքան արդյունավետ հաղորդակցվելու համար, ինչպես հաղորդակցվում է այլ անձանց հետ: Սա նշանակում է, որ Դուք,

¹⁴ 28 C.F.R. §36.104 [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

ինչպես ցանկացած այլ անձ, երես առ երես հաղորդակցման և գրավոր հաղորդակցման իրավունք ունեք:

Եթե Դուք արդյունավետ հաղորդակցվելու համար լրացուցիչ օգնությունների և ծառայությունների կարիք ունեք, առևտրային կազմակերպությունը պետք է դրանք տրամադրի Ձեզ, ինչպես օրինակ՝

- ժեստերի լեզվի որակավորված թարգմանիչներ,
- տառադարձման ծառայություններ, ինչպես օրինակ իրական ժամանակում կատարվող աուդիո տառադարձում (CART, Captioned audio realtime transcription)
- լսողության աջակցող սարքեր,
- արձանագրողներ
- որակավորված ընթերցողներ
- ձայնագրված տեքստ, և
- բրայլյան նյութեր
- Էլեկտրոնային նյութեր
- գրավոր նյութեր մատչելի ձևաչափերով

Օրինակ, հիվանդանոցը պետք է ժեստերի լեզվի թարգմանիչ կամ իրական ժամանակի տառադարձող տրամադրի՝ լսողության խնդիրներով հիվանդի հետ հաղորդակցվելու համար: (Իրական ժամանակի տառադարձումը խոսքի ցուցադրությունն է Էկրանին): Մասնավոր դպրոցը պետք է տեսողության խնդիրներով աշակերտներին այլընտրանքային ձևաչափերով նյութեր տրամադրի, ինչպես օրինակ գրավոր նյութերի Էլեկտրոնային տարբերակները կամ աուդիո կամ տեսանյութեր:¹⁵

Պատշաճ փոփոխություններ/հարմարեցումներ

Մասնավոր առևտրային հանրային կազմակերպությունները և կացարան տրամադրողները պետք է փոփոխություններ կատարեն իրենց քաղաքականություններում, գործելակերպերում և ընթացակարգերում, եթե կարիք ունեն հաշմանդամ մարդկանց թույլ տալու օգտվել ծառայություններից և կացարաններից:¹⁶ Օրինակ՝ առևտրային կազմակերպությունը կարող է պարտավոր լինել բացառություն կատարել իր «Առանց կենդանիներ»

¹⁵ 28 C.F.R. § 36.303 [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁶ Տե՛ս՝ 28 C.F.R. § 36.302; 42 U.S.C. § 3604(f)(3)(B). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

քաղաքականությանը՝ ծառայություն տրամադրող կենդանու համար, կամ մեծ բանկերը կարող են պարտավոր լինել մատչելի հատկություններով ATM սարքեր տրամադրել, ինչպիսիք են Բրայլի գրերով կամ Էկրանի տեղեկատվությունը ձայնանյութի փոխարկող ներածում տրամադրել:

Եթե Դուք ֆիզիկական փոփոխություն կատարելու կարիք ունեք (ինչպես օրինակ թեքահարթակ կամ բազրիք) Ձեր բնակարանում կամ տանը, ապա Ձեր հողի սեփականատերը պետք է Ձեզ թույլ տա փոփոխություններ կատարել, եթե այն կատարվում է պատշաճ կերպով: Սակայն շատ դեպքերում Դուք պարտավոր կլինեք վճարել դրա համար:¹⁷

Առևտրային կազմակերպությունը կարո՞ղ է հարմարեցման համար դրամ գանձել ինձնից:

Ոչ: Առևտրային հանրային կազմակերպությունը չի կարող Ձեզնից գումար գանձել պատշաճ հարմարեցումների կամ կազմակերպության քաղաքականություններում, գործելակերպերում կամ ընթացակարգերում անհրաժեշտ փոփոխությունների համար՝ Ձեր հաշմանդամության պատճառով:¹⁸ Օրինակ, առևտրային կազմակերպությունը չի կարող Ձեզնից գումար գանձել Ձեր ծառայությունում կենդանուց օգտվելը թույլատրելու կամ անձնական ուղեկցող թույլ տալու համար:

Չանրային առևտրային կազմակերպությունը, ինչպես օրինակ հողի սեփականատերը պարտավո՞ր է կատարել բոլոր հարմարեցումները/փոփոխությունները:

Ոչ, հանրային առևտրային կազմակերպությունը կամ բնակարան տրամադրողը, ինչպիսին է հողի սեփականատերը, պարտավոր չէ տրամադրել հարմարեցումներ, որոնք.

- կփոխեն առևտրային կազմակերպության հիմնական բնույթը (հիմնական փոփոխություն) կամ
- անհարկի ծախսեր կառաջացնեն (առանձնահատուկ դժվարություն կամ ծախս):

¹⁷ 42 U.S.C. § 3604(f)(3)(A). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁸ 28 C.F.R. § 36.301(c) [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Նույնիսկ եթե առևտրային կազմակերպությունը կամ կացարան տրամադրողը պարտավոր չէ հարմարեցումներ կատարել ֆինանսական ծախսերի կամ հիմնական փոփոխության պատճառով, այն պետք է փորձի գնտել կամ որոշ տեսակի հարմարեցումներ կատարել, որոնք օգտակար կլինեն Ձեզ:

Առևտրային կազմակերպությունից կամ կացարան տրամադրողից չի պահանջվում ամենազարգացած տեխնոլոգիան տրամադրել, բավարար է, որ նրանք արդյունավետ հաղորդակցություն տրամադրեն: Որոշելու համար, թե օգնության ինչ տեսակներ և ծառայություններ են անհրաժեշտ արդյունավետ հաղորդակցման համար, օրենքը հաշվի է առնում Ձեր խնդրի բնույթը, ինչ սարքեր և ծառայություններ են մատչելի, ինչպես նաև ներառված հաղորդակցման ժամանակահատվածը ու բարդությունը:¹⁹

Հանրային առևտրային կազմակերպության կողմից օրինակա՞ն է իմ հաշմանդամության պատճառով իր ապրանքները և ծառայությունները ինձ տրամադրելը մերժելը:

Երբեմն, բայց միայն հազվադեպ դեպքերում: ADA-ի համաձայն մասնավոր առևտրային կազմակերպությունը կարող է մերժել Ձեզ իր ապրանքները և ծառայությունները տրամադրելուց, եթե Դուք ուղղակի սպառնալիք եք հանդիսանում այլ անձանց առողջությանը և անվտանգությանը: Սա սահմանվում է որպես առանձնահատուկ վտանգ այլ անձանց առողջությանը կամ անվտանգությանը:²⁰ Որոշելու, թե արդյոք Դուք ուղղակի վտանգ եք ներկայացնում, առևտրային կազմակերպությունը պետք է դիտարկի Ձեր առանձնահատուկ դեպքը և պատշաճ դատողություն գործադրի՝ Ձեր անհատական իրավիճակից ելնելով: Այն պետք է հաշվի առնի ներկայիս առողջական տվյալները կամ առավելագույն մատչելի օբյեկտիվ փաստերը, որոնք հաշվի են առնում՝

- վտանգի բնույթը, տևողությունը և ծանրության աստիճանը.
- վնասվածքի ի հայտ գալու հավանականության աստիճանը, և

¹⁹ 28 C.F.R. §§ 36.302, 36.303, Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգիրք §54.1 [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁰ 28 C.F.R. § 36.104. [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

- արդյոք պատշաճ փոփոխությունները կամ լրացուցիչ օգնություն խնդրելը կարող են նվազեցնել կամ վերացնել վտանգը:²¹

Օրինակա՞ն է ինձ մերժել կացարան տալ կամ վտարել՝ իմ հաշմանդամության պատճառով:

Սովորաբար, Դուք չեք կարող մերժվել մատչելի բնակարանի համար՝ Ձեր հաշմանդամության պատճառով:²² Սակայն, հանրային առևտրային կազմակերպության նման, կացարան տրամադրողը կարող է Ձեզ մերժել կացարան տրամադրել կամ վտարել Ձեզ, եթե Ձեր հաշմանդամության պատճառով Դուք ուղղակի սպառնալիք եք ներկայացնում այլ անձանց առողջությանը և անվտանգությանը՝ պատշաճ հարմարեցումներով կամ առանց դրանց:²³

Ինչպե՞ս դատական գործ հարուցել փոքր հայցապահանջների դատարանում

Այս բաժինը Ձեզ կօգնի հասկանալու՝

- Փոքր հայցապահանջների դատարանի հիմունքները (Small Claims Court Basics)
- Ինչպես գործ սկսել
- Պատրաստվել դատին
- Լսումից հետո
- Հավելյալ օգնության կարիք ունե՞ք:

Փոքր հայցապահանջների դատարանի հիմունքները

Ի՞նչ է փոքր հայցապահանջների դատարանը:

Փոքր հայցապահանջների դատարանը հատուկ դատարան է, որտեղ վեճերն արագ և էժան են լուծվում: Կանոնները պարզ և ոչ պաշտոնական են: Դատական գործ հարուցողը Հայցվորն է (Plaintiff): Դատական կարգով հետապնդվողը Պատասխանողն է (Defendant):²⁴

²¹ 28 C.F.R. § 36.208(a)-(b). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²² 42 U.S.C. § 3604(f)(1)-(2). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²³ 42 U.S.C. 3604(f)(9). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁴ Փոքր հայցադիմումների դատարան, Հիմունքներ, <http://www.courts.ca.gov/1256.htm> (վերջին այցելություն փետրվարի 24, 2015թ.): «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

Ես կարո՞ղ եմ խտրականության դեմ դատական գործ հարուցել փոքր հայցապահանջների դատարանում:

Այո: Դուք կարող եք հայց ներկայացնել առևտրային կազմակերպության դեմ(և/կամ առևտրային կազմակերպության աշխատակցի)՝ դաշնային օրենքները խախտելու համար, ինչպիսիք են ADA-ն կամ Արդար բնակարանաշինության մասին օրենքը կամ Կալիֆորնիայի որևէ օրենք, որը Ձեզ պաշտպանում է խտրականությունից:

Ծանոթագրություն. Դուք կարող եք առանձին հայցեր ներկայացնել առևտրային կազմակերպության դեմ՝ Կալիֆորնիայի օրենքը խախտելու պատճառով, բայց Դուք կարող եք միայն մեկ որոշում ստանալ:²⁵

Ի՞նչ կարող եմ պահանջել փոքր հայցապահանջների դատարանում:

Դրամ: Եթե Դուք դատական գործ եք հարուցել փոքր հայցապահանջների դատարանում, Դուք կարող եք միայն դրամ պահանջել:

Որքա՞ն դրամ կարող եմ պահանջել:

Դուք կարող եք «պարզև» պահանջել, որը երեք (3) անգամ ավելի է Ձեր փաստացի կորստից կամ 4000 ԱՄՆ դոլար, որն ավելի մեծ լինի: Ուստի եթե դատարանը համաձայն է, որ Դուք խտրականության եք ենթարկվել, Դուք պետք է առնվազն 4000 ԱՄՆ դոլար ստանաք:²⁶

Ձեր հայցապահանջում Դուք չեք կարող 10000 ԱՄՆ դոլարից ավելի պահանջել: Դուք կարող եք ներկայացնել ցանկացած քանակությամբ հայցապահանջներ՝ յուրաքանչյուրը մինչև 2500 ԱՄՆ դոլարի չափով: Բայց Դուք կարող եք միայն երկու հայցապահանջ ներկայացնել մեկ

²⁵ *Տե՛ս* Կալիֆորնիայի Զաղաքացիական օրենսգիրք § 54.1 [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁶ Կալիֆորնիայի Զաղաքացիական օրենսգիրք § 52(a): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

օրացուցային տարվա ընթացքում, որոնցում 2500 ԱՄՆ դոլարից ավելի կարող եք պահանջել:²⁷

Եթե ցանկանում եք դատական գործ հարուցել 10000 ԱՄՆ դոլարից ավել գումարի համար, Դուք կարող եք հայց ներկայացնել Գերագույն Դատարանի (Superior Court) քաղաքացիական բաժնում կամ փոքր հայցադիմումների դատարանում և հրաժարվել 10000 ԱՄՆ դոլարից ավել որևէ գումարից: Եթե Դուք դատական գործ հարուցեք Գերագույն Դատարանում, հնարավոր է, որ Դուք փաստաբանի կարիք ունենաք, ով կներկայացնի Ձեզ: Ձեր հայցադիմումում կարող եք Դատարանին խնդրել, որպեսզի առևտրային ընկերությանը պարտավորեցնեն՝ փոխհատուցելու Ձեր փաստաբանի ծախսերը:

Ես կարո՞ղ եմ դատարանի կարգադրություն խնդրել:

Ոչ: Փոքր հայցապահանջների դատարանում Դուք չեք կարող դատարանի կարգադրություն խնդրել (կարգադրագիր)՝ առևտրային կազմակերպությանը պարտադրելու ինչ-որ բան անել կամ դադարել ինչ-որ բան անել, օրինակ՝

- Իր տարածքը մատչելի դարձնելու,
- Իր աշխատակիցներին հաշմանդամությանը վերաբերող իրազեկման վերապատրաստում տրամադրելու,
- Իր հաշմանդամ հաճախորդներին անձնական աջակցություն ցուցաբերել, կամ
- Վերջ տալ խտրական գործելակերպերին և/կամ քաղաքականությանը:

Եթե Դուք դատական կարգադրագիր եք ցանկանում, պետք է Ձեր հայցը ներկայացնեք կամ Կալիֆորնիայի Գերագույն Դատարանում նահանգային դատարան (California Superior Court [state court]), կամ ԱՄՆ շրջանային դատարանում (դաշնային դատարան) (U.S. District Court [federal court]):

Ցանկացած ոք կարո՞ղ է հայց ներկայացնել:

Հայց ներկայացնելու համար Դուք պետք է առնվազն 18 տարեկան լինեք և «իրավասու», այն իմաստով, որ Դուք ի վիճակի լինեք

²⁷ Փոքր հայցադիմումների դատարան, Որքա՞ն գումարի հայց կարող եք ներկայացնել Փոքր հայցադիմումների դատարանում (Small Claims Court, How Much Can You Sue for In Small Claims Court?): <http://www.courts.ca.gov/1256.htm> (վերջին այցելություն փետրվարի 24, 2015). «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

հասկանալի հայցի բնույթը և դատական գործընթացը և լիովին մասնակցել:

Եթե Դուք 18 տարեկանից փոքր եք կամ եթե դատարանը որոշել է, որ Դուք «իրավասու չեք», Դուք պետք է Դատարանին խնդրեք ներկայացուցիչ նշանակել, որը կներկայացնի գործը Ձեր փոխարեն: «Ոչ իրավասու» տերմին է, որը նշանակում է, որ Դուք չեք կարող դատական գործ հարուցել առանց իրավասու չափահասի օգնության՝ որոշակի մտավոր վիճակի պատճառով:²⁸

Ներկայացուցիչ անձը կոչվում է «խնամակալ» և սովորաբար ծնողը, բարեկամը կամ չափահաս ընկերն է:

Դա անելու համար լրացրեք *Application and Appointment of Guardian ad litem*, form Civ-010 ձևը: Դուք կարող եք ձևաթղթից օգտվել այստեղ՝ <http://www.co1urts.ca.gov/documents/civ010.pdf>

Ներկայացնելու համար վերջնաժամկետ կա՞:

Այո: Դուք պետք է հայցը ներկայացնեք փոքր հայցապահանջների դատարանում երկու (2) տարվա ընթացքում՝ սկսած Ձեր՝ խտրականության ենթարկվելու ամսաթվից:

Կան մի քանի բացառություններ, օրինակ, եթե խտրականությունը տեղի է ունեում, երբ՝

- Պատասխանողը նահանգից դուրս է գտնվել.
- Դուք դեռ 18 տարեկան չեք եղել.
- Դուք բանտարկված եք եղել. կամ
- Դուք գործունակ չեք եղել:²⁹

Ես կարո՞ղ եմ փաստաբան ունենալ:

Ոչ: Դուք չեք կարող փաստաբան ունենալ, ով Ձեզ կներկայացնի փոքր հայցապահանջների դատարանում: Բայց Դուք կարող եք խոսել փաստաբանի հետ դատական նիստից առաջ և հետո:

²⁸ Փոքր հայցադիմումների դատարան, Յիմուլքներ, <http://www.courts.ca.gov/1256.htm> (վերջին այցելություն փետրվարի 24, 2015թ.).
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁹ Փոքր հայցադիմումների դատարան, Յիմուլքներ, <http://www.courts.ca.gov/1256.htm> (վերջին այցելություն փետրվարի 24, 2015թ.).
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Ես պարտավոր եմ իմ դատական գործը փոքր հայցապահանջների դատարանում ներկայացնել:

Ոչ: Դուք նաև կարող եք Ձեր գործը Կալիֆորնիայի Գերագույն Դատարանում կամ Միացյալ Նահանգների Շրջանային դատարանում ներկայացնել: Բայց ավելի ոյուրին է հայցը փոքր հայցապահանջների դատարանում ներկայացնել: Կանոնները ոյուրին և ոչ պաշտոնական են: Եվ Դուք փաստաբանի կարիք չունեք:

Ինչպե՞ս հայց հարուցել:

Նախ, որոշեք, թե Ձեր ժամանակը և ջանքերն արժե՞ն, որ Դուք դատական հայց հարուցեք փոքր հայցապահանջների դատարանում: Փոքր հայցապահանջների դատարանի դատավարություններն արագ և պարզ են: Բայց Ձեր գործը պատրաստելը, դատարանին փաստաթղթերը հանձնելը և Ձեր դատական փաստաթղթերը ներկայացնելը կարող է շատ ժամանակ պահանջել:

Ինչպե՞ս պետք է հասկանամ, որ հիմնավորված պահանջ եմ ներկայացնում:

Բացի խտրականությունից փոքր հայցապահանջների այլ հաճախ հանդիպող վեճերը հետևյալի մասին են՝

- Ավտովթարի հետևանքով սեփականությանը հասցված վնաս կամ անձնական վնասվածք.
- Հողի /անշարժ գույքի սեփականատիրոջ անվտանգության երաշխիքներ.
- Հարևանի կողմից Ձեր սեփականությանը հասցված վնաս.
- Կապալառուների հետ վեճեր, որոնք վերաբերում են վերանորոգումներին կամ տան բարելավման աշխատանքներին.
- Պարտքով վերցված դրամի հավաքում.
- Տան սեփականատերերի միության վեճեր. և
- Շատ այլ հարցեր:³⁰

Բողոքներ. Դուք չեք կարող բողոք ներկայացնել, եթե այն անձն եք, ով ներկայացրել է հայցը, եթե Պատասխանողը Ձեր դեմ հակադարձ հայց

³⁰ Փոքր հայցադիմումների դատարան, Հիմունքներ, <http://www.courts.ca.gov/1256.htm> (last visited Feb. 24, 2015). «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

չի ներկայացրել: Եթե մեկ ուրիշը Ձեր դեմ հայց ներկայացնի և շահի գործը, Դուք կարող եք բողոքարկել: Սա նշանակում է, որ եթե Դուք հայցվորն եք, ով դատական գործ է հարուցել պատասխանողի դեմ և Դուք պարտվում եք, Դուք չեք կարող բողոքարկել դատարանի որոշման դեմ:

Երբ Դուք բողոքարկում եք փոքր հայցադիմումների դատական որոշման դեմ, Դուք գերագույն դատարանին խնդրում եք փոխել փոքր հայցադիմումների դատարանի դատավորի որոշումը: Դուք դատական մեկ այլ լսում կունենաք և պետք է Ձեր գործը կրկին ներկայացնեք:³¹

Ինչպե՞ս պետք է հայց ներկայացնեմ:

Նախ խոսեք այն անձի կամ առևտրային կազմակերպության ներկայացուցչի հետ, որի դեմ մտադիր եք դատական գործ հարուցել: Փորձեք հարցերը լուծել, նախքան կոչվեք դատարան: Հարցերը նախապես լուծելով հնարավոր է խուսափել սթրեսից և այն անորոշությունից, որն ուղեկցվում է դատական գործը: Դատարանում գործը քննելու համար Դուք կարող եք հեռախոսազանգ կատարել կամ «ցպահանջ» նամակ գրել, որտեղ կնկարագրվի Ձեր հայցը և այն, թե ինչ եք Դուք ցանկանում: Ցպահանջ նամակ գրելու աջակցության համար այցելեք՝ <http://www.courts.ca.gov/11145.htm>.

Ձեր ցպահանջ նամակն ուղարկեք պատվիրված նամակով, որպեսզի կարողանաք ապացուցել, որ Պատասխանողն այն ստացել է:

Եթե Պատասխանողը շարունակի չվճարել Ձեզ, լրացրեք ձևաթուղթ SC-100, Small Claims Case Order to go to Court-ը: Ձևաթուղթը կարող է տեղակայվել՝ <http://www.courts.ca.gov/1017.htm>.

SC-100-ը ներկայացրեք Դատարանի քարտուղարին (Court Clerk): Քարտուղարը Ձեզ լսման օր և ժամ կնշանակի: Եթե Դուք որևէ առանձնահատուկ օր լսում նախընտրեք (օրինակ շաբաթ) կամ գիշերը, հարցրեք քարտուղարին:

³¹ Փոքր հայցադիմումների դատարան, Հիմունքներ, <http://www.courts.ca.gov/1016.htm> (վերջին այցելություն փետրվարի 24, 2015թ.):
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Որոշ վարչաշրջաններում Դուք կարող եք փոստով կամ առցանց ներկայացնել: Բայց եթե Դուք հայցի մեջ սխալ կատարեք, հնարավոր է, որ ստիպված լինեք սխալն ուղղել և կրկին ներկայացնել:³²

Որտե՞ղ պետք է ներկայացնեմ իմ հայցը:

Դուք պետք է Ձեր հայցը (SC-100) ներկայացնեք իրավասու դատարանում: Այլապես դատարանը կմերժի Ձեր գործը:

Ներկայացրեք այն դատարանում, որին ընդդատյա է այն տարածքը, որտեղ՝

- Պատասխանողն ապրում կամ գբաղվում է իր բիզնեսով. կամ
- Գտնվում է առևտրային կազմակերպության մասնաճյուղի գրասենյակը կամ հիմնական վայրը. կամ
- Որտեղ խտրականությունը տեղի է ունեցել:³³

Իմ գործով ո՞վ է հանդիսանում Պատասխանողը:

Պատասխանողն այն առևտրային կազմակերպությունը կամ աշխատակիցն է, որի ծառայություններից Դուք օգտվում եք: Դատական գործի ձևաթղթերում Դուք պետք է օգտագործեք Պատասխանողի ճշգրիտ իրավաբանական անունը:

Եթե Պատասխանողը առևտրային կազմակերպություն կամ կորպորացիա է, և Դուք չգիտեք ճշգրիտ իրավաբանական անունը, Փոքր հայցապահանջների խորհրդատուից (Small Claims Advisor) հարցրեք, թե որտեղից կարելի է գտնել այս տվյալները:

Ծանոթագրություն: Դուք կարող եք միայն դրամ գանձել այն Պատասխանողից, ում ճշգրիտ անունը նշված է Ձեր հայցում: Ուստի շատ կարևոր է Պատասխանողի անունը ճիշտ նշել: Ահա մի քանի հուշում առ այն, թե ինչպես պետք է նշեք Ձեր պատասխանող(ներ)ին.

³² Փոքր հայցադիմումների դատարան, Փոքր հայցադիմումների գործ ներկայացնելու քայլերը, <http://www.courts.ca.gov/1008.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015 թ.): «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

³³ Փոքր հայցադիմումների դատարան, Ձեր հայցը ներկայացնելու համար ճիշտ դատարանը գտնելը, <http://www.courts.ca.gov/9745.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

Ձեր Պատասխանողը...³⁴

Ֆիզիկական անձ է՝ Գրեք անձի անունը, միջին անվանակգրնատառը և ազգանունը:

Ամուսնացած զույգ է՝ Գրեք ամուսնու և կնոջ ամբողջական անունները:

Օրինակ՝ James A. Jones and Sally R. Jones

Եթե Դուք չգիտեք կնոջ անունը, գրեք՝

James A. Jones և տիկին James A. Jones

Առևտրային կազմակերպություն՝ Պարզեք, թե արդյոք առևտրային կազմակերպությունը կորպորացիա, համագործակություն կամ անհատական ձեռնարկություն է: Այնուհետև, կարդացեք ստորև.

Անհատական ձեռնարկություն (առևտրային կազմակերպություն, որի սեփականատերը մեկ անձ է). Ձեր հայցում գրեք սեփականատիրոջ անունը ԵՎ առևտրային անունը: Սեփականատիրոջ անունից հետո գրեք՝ «Ֆիզիկական անձ»: Եթե Դուք շահեք Ձեր գործը, Դուք կարող եք դրամը գանձել առևտրային կազմակերպությունից կամ ֆիզիկական անձից:

Օրինակ՝ Օրինակ՝ «Sue Smith, individual & Smith Products»

Եթե սեփականատերը կեղծ անվան ներքո է առևտրային գործունեությամբ զբաղվում (հորինված անուն), գրեք «և զբաղվում է բիզնեսով որպես» (DBA, Doing Business As)՝ առևտրային անունից առաջ:

Օրինակ՝ «Sue Smith, individual & DBA Continental Candies»

Գործընկերություն (Առևտրային կազմակերպությունը տնօրինվում է 2 կամ ավելի անձանց կողմից) Նշեք գործընկերությունը ԵՎ յուրաքանչյուր գործընկերոջ անունը:

³⁴ Փոքր հայցադիմումների դատարան, Պատասխանողին ինչպես անվանելը որոշելը, <http://www.courts.ca.gov/9736.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015).
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Եթե Դուք շահեք Ձեր գործը, Դուք կարող եք փոխհատուցում ստանալ անհատ գործընկերներից կամ գործընկերությունից:

Օրինակ՝ «Jim Smith, Individual, & John Jones, Individual, & DBA Smith & Jones Corporation»

Գրեք կորպորացիայի ճշգրիտ անունը, որին կհետևի «կորպորացիա» կամ «Inc.»:

Օրինակ՝ «Sally's Dresses, a corporation or Sally's Dresses, Inc.»

Մի՛ նշեք այն մարդկանց անունները, ովքեր կորպորացիայի սեփականատերն են, եթե նրանք հաստատապես կորպորացիայից դուրս չեն աշխատում:

Կորպորացիայի մասնաճյուղ (Subsidiary of a Corporation) (կորպորացիայի սեփականությունը հանդիսացող ընկերություն) Գրեք կորպորացիայի անունը, այնուհետև DBA տառերը և մասնաճյուղի անվանումը:

Օրինակ՝ «Lotus Corporation, DBA The Flower Company»

Չայց ներկայացնելու համար ես պետք է վճարե՞մ:

Այո: Վճարման չափը կախված է Ձեր հայցի չափից և այն հայցերի քանակից, որոնք Դուք ներկայացրել եք վերջին 12 ամսվա ընթացքում:

Եթե Դուք 12 կամ ավելի քիչ հայց եք ներկայացրել վերջին 12 ամսվա ընթացքում,

<u>Ձեր հայցի չափը՝</u>	<u>Չայցի հարուցման գումարի չափը՝</u>
0 – 1500 ԱՄՆ դոլար	\$30
\$1500.01 to \$5,000	\$50
\$5000.01 to \$10,000	\$75

Դուք կարող եք հայցի հարուցման ողջ գումարի կամ դրա մի մասի համար հրաժարում ստանալ, եթե պետական նպաստներ եք ստանում, ցածր եկամուտ ունեցող անձ եք կամ բավարար չափով եկամուտ չունեք՝ Ձեր տան հիմնական կարիքների և դատական ծախսերը վճարելու համար, ուստի ստիպված չեք լինի ողջ գումարը վճարել: Վճարման հրաժարման փաստաթուղթը փոքր հայցադիմումի հետ միաժամանակ անպայման պետք է ներկայացնել դատարան:

Եթե Դուք ի վիճակի չեք վճարել դատական ծախսերը, լրացրեք և ներկայացրեք հետևյալ ձևաթղթերը՝

- Request to Waive Court Fees (form FW-001)
- Order on Application to Waiver of Court Fees and costs (form FW-003)

Դուք կարող եք այս ձևաթղթերն առցանց լրացնել հետևյալ հղումով՝ <http://www.courts.ca.gov/9743.htm>.³⁵

Պատասխանողն ինչպե՞ս պետք է տեղեկանա հայցի մասին:

Դուք պետք է Պատասխանողին տեղեկացնեք, որ նրա դեմ դատական հայց եք ներկայացնում: Սա նշանակում է, որ ինչ-որ մեկը, ոչ Դուք, պետք է յուրաքանչյուր Պատասխանողի անձամբ հանձնի (փոխանցի) Ձեր լրացրած հայցի պատճենը (ձևաթուղթ SC-100):

Ի՞նչ է «փաստաթղթերը դատարան ներկայացնելը»:

Փաստաթղթերը հանձնելու խիստ կանոններ գոյություն ունեն: «Փաստաթղթերի հանձնումը» կամ «փաստաթղթերը հանձնելն» այն է, երբ ինչ-որ մեկը, ոչ Դուք կամ այս գործում նշված որևէ մեկը, դատարանի Ձեր փաստաթղթերը հանձնում է այն անձին, առևտրային կազմակերպությանը կամ պետական իրավական միավորմանը, ում դեմ Դուք դատական գործ եք հարուցել: Փաստաթղթերի փոխանցումը մյուս կողմին տեղեկացնում է հետևյալի մասին՝

- ինչ եք Դուք պահանջում,
- Որտեղ և երբ պետք է դատավարությունը տեղի ունենա,
- ինչ կարող են նրանք անել:

Վճարումից հրաժաման ձևաթղթեր մի ներկայացրեք: Այս ձևաթղթերը միայն դատարանի համար են:³⁶

³⁵ Փոքր հայցադիմումների դատարան, վճարումից հրաժարում, <http://www.courts.ca.gov/1090.htm>, (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁶ Փոքր հայցադիմումների դատարան, ծանուցման գործընթացի ներկայացում, <http://www.courts.ca.gov/1092.htm>, (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Ե՞րբ պետք է փոխանցեմ հայցը:

Դա կախված է նրանից, թե **Դուք** ինչպես եք փոխանցում Ձեր հայցը: Եթե Դուք Հայցվորն եք, ապա հանձնեք Հայցվորի հայցը(Ձևաթուղթ SC-100, Ձևաթուղթը կարող է տեղակայված լինել՝

<http://www.courts.ca.gov/1017.htm>):

- Անձամբ հանձնելու դեպքում Ձեր հայցը հանձնեք նշանակված դատական քննության ամսաթվից առնվազն 15 օր առաջ (կամ 20 օր առաջ, եթե ֆիզիկական անձը, առևտրային կազմակերպությունը կամ պետական իրավական միավորումը, որոնց դեմ Դուք հայց եք ներկայացնում, երկրից դուրս են):
- Փոխարինողի կոմից հանձման դեպքում Ձեր հայցը հանձնեք դատարանի ամսաթվից առնվազն 25 օր առաջ (կամ 30 օր առաջ, եթե ֆիզիկական անձը, առևտրային կազմակերպությունը կամ պետական իրավական միավորումը, որոնց դեմ Դուք հայց եք ներկայացնում, երկրից դուրս են): Եթե ֆիզիկական անձը, առևտրային կազմակերպությունը կամ պետական իրավական միավորումը, որոնց դեմ Դուք հայց եք ներկայացնում Կալիֆորնիայից դուրս են, կամ եթե Դուք մեկ այլ ձևաթղթով եք հանձնում, ապա Փոքր հայցադիմումների խորհրդատուից հավելյալ տեղեկություններ ինդրեք:

Ո՞վ կարող է հանձնել:

Ընկերը, գործընթացը ներկայացնողը կամ ոստիկանապետը կարող են փաստաթղթերը դատարան հանձնել: Ներկայացնողը պետք է 18 տարին լրացած անձ լինի և գործում նշված չլինի:

- «Գործընթացը ներկայացնողը» ինչ-որ մեկն է, ում Դուք վճարում եք՝ դատական ձևաթղթերն առաքելու համար: Նայեք «Գործընթացը ներկայացնող» ("Process Serving") բաժինը դեղին էջերում (Yellow Pages):
- Շերիֆը (Sheriff) (կամ ոստիկանապետը (Marshal), եթե Ձեր վարչաշրջանն ունի նման պաշտոնյա) նույնպես կարող է առաքել դատական ձևաթղթերը: Դատարանի քարտուղարին հարցրեք, թե ինչպես կարող եք դիմել Շերիֆին: Կամ նայեք Ձեր հեռախոսագրքի վարչաշրջանի «Շերիֆ» ("Sheriff") բաժնում: Դուք պետք է վճարեք Շերիֆին, եթե վճարումից ազատման իրավունք չունեք:

Ներկայացնողն ինձ պետք է փաստաթղթերը հանձնելու ապացույց տրամադրի՞:

Այո: Այն անձը, ով ձևաթղթերն անձամբ է հանձնում, պետք է Proof of Service form (SC-104) լրացնի և ստորագրի, որից հետո այն Ձեզ տրամադրի: Այնուհետև, Դուք պետք է այն վերցնեք և ներկայացնեք քարտուղարի գրասենյակ: Երբ ներկայացնում եք, դատարանի կողմից դրոշմված պատճենը Ձեզ համար պահեք:

Եթե Դուք վճարում եք դատարանի քարտուղարին՝ Ձեր ձևաթղթերը սահմանափակ Վկայագրված փոստով ուղարկելու համար (Certified Mail), քարտուղարի գրասենյակից հարցրեք, թե արդյոք իրենք ստացել են Վկայագրված փոստի ստացականը:

Պատասխանողին փաստաթղթերը հանձնելու վերջնաժամկետ կա՞:

Այո: Պատասխանողին փաստաթղթերը պետք է հանձնվեն լսումից առնվազն 15 օր առաջ: Կամ լսումից 20 օր առաջ, եթե Պատասխանողն ապրում է մեկ այլ երկրում: Եթե Պատասխանողին փաստաթղթերը ժամանակին չեն հանձնվում, դատարանը հետաձգում է գործի քննությունը:

Այն անձը, ում դատական կարգով հետապնում եմ, կարո՞ղ է իմ դեմ դատական հայց ներկայացնել:

Այո: Պատասխանողը կարող է փոքր հայցապահանջ ներկայացնել Ձեր դեմ: Սա կոչվում է Defendant's Claim (SC-120): Այս դեպքում դատարանը երկու հայցադիմումի համար միևնույն ժամանակ որոշում կկայացնի:

Եթե Պատասխանողի հայցային պահանջը 10000 ԱՄՆ դոլարից ավելի է, նա կարող է Գերագույն դատարան հայց ներկայացնել: Այնուհետև նա կարող է դատարանին խնդրել Ձեր հայցը փոխադրել Գերագույն դատարան:

Պատասխանողը պարտավո՞ր է ինձ ծանուցում տրամադրել:

Այո: Եթե Պատասխանողը Ձեր դեմ հայց ներկայացնի, նա պետք է Ձեր փաստաթղթերը ներկայացնի (Ձեզ ծանուցում տրամադրի)՝ դատավարությունից առնվազն հինգ օր առաջ: Բայց, եթե

Պատասխանողը Ձեր փաստաթղթերն ստանա դատավարությունից առաջ 10-օրյա ժամանակահատվածից շուտ ժամկետում, նա կարող է Ձեր փաստաթղթերը ներկայացնել դատավարությունից միայն մինչև մեկ օր առաջ:³⁷

Ես կարո՞ղ եմ փոխել (բարեփոխել) իմ հայցը:

Այո: Եթե Ձեր պատասխանողների փաստաթղթերը դեռ չեն ներկայացվել, այցելեք Փոքր հայցադիմումների քարտուղարի գրասենյակ և խնդրեք փոխել (փոփոխություններ ներկայացնել) Ձեր հայցը: Ձեզ հետ բերեք Ձեր հայցի բնօրինակի ձևաթղթերը: Երբ ներկայացնեք Ձեր «փոփոխված հայցը», Դուք պետք է պատասխանողի փաստաթղթերը ներկայացնեք վերը նկարագրված կարգով:

Եթե Ձեր հայցը արդեն ներկայացվել է Պատասխանողներից որևէ մեկին, Դուք պետք է նամակ գրեք դատարանին՝ Ձեր հայցը փոխելու նպատակով թույլտվություն խնդրելու համար: Փոքր հայցադիմումների խորհրդատուն կարող է այս հարցում Ձեզ օգնել:

Մեկ կամ ավելի Պատասխանողի հեռացնելու համար՝ լրացրեք մերժման ձևաթուղթը՝ դատարանին տեղեկացնելու, թե Պատասխանողներից որ մեկին այլևս չեք ցանկանում դատական կարգով հետապնդել:

(*Request to Amend Claim Before Hearing, Form SC-114*): Դուք պետք է մերժումը ներկայացնեք մյուս Պատասխանողներին, եթե նրանց արդեն ներկայացվել է փոքր հայցադիմումների Ձեր բողոքը: Եթե Ձեր բողոքը դեռ չի ներկայացվել, կարիք չկա, որ Դուք այլ Պատասխանողներին ծանուցեք մերժման մասին:³⁸ Դուք կարող եք գործը մերժել «նախապաշարմունքով» կամ «առանց նախապաշարմունքի»:

«Նախապաշարմունքով» նշանակում է, որ Դուք չեք կարողանա ապագայում նույն հայցն ընդդեմ նույն պատասխանողի բերել:

³⁷ Փոքր հայցադիմումներ, դատական գործի հարուցում Ձեր դեմ, <http://www.courts.ca.gov/1010.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.):
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁸ Փոքր հայցադիմումներ, Ձեր հայցի կամ ամսաթվի փոփոխում, <http://www.courts.ca.gov/1387.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.):
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

«Առանց նախապաշարմունքի» նշանակում է, որ Դուք իրավունք ունեք այլ դատական գործեր հարուցել՝ նույն հայցի վրա հիմնված, քանի դեռ չի գործում սահմանափակումների մասին օրենքը :

Ես կարող եմ փոխել իմ դատարան ներկայանալու ամսաթիվը:

Այո: Լրացրեք և ներկայացրեք Request to Postpone Small Claims Hearing (form SC-150)՝ Ձեր լսումից առնվազն 10 օր առաջ: Զարտուղարը Ձեզնից 10 ԱՄՆ դոլար վճարում կգանձի:

Կամ, Դուք կարող եք նամակ գրել Դատարան՝ բացատրելու, թե ինչու դատավարության օրը փոխելու կարիք ունեք:

Դուք նաև պետք է փոստով կամ անձամբ Ձեր SC-110 ձևաթղթի պատճենը կամ դատարանին ուղղված նամակն ուղարկեք բոլոր Պաշտպանողներին և Ձեր գործով այլ Հայցվորներին:

Եթե նախքան Ձեր դատավարությունը 10 օրից պակաս ժամանակ ունեք, Ձեր լրացված SC-110 ձևաթուղթը կամ նամակը տարեք Զարտուղարի գրասենյակ ԵՎ SC-110 ձևաթղթի կամ նամակի պատճենը փոստով կամ անձամբ հանձնեք բոլոր այլ անձանց , ովքեր նշված են հայցի մեջ:

Կամ, Ձեր լսման և ժամանակ դատավորից նոր ամսաթիվ ինդրեք (կոչվում է «շարունակություն»):³⁹

Ինչպե՞ս պատրաստվել դատաքննությանը:

Որքա՞ն պետք է սպասեմ՝ դատարան գնալու համար:

Եթե Դուք ինչ-որ մեկի դեմ դատական գործ եք հարուցել, Դուք պետք է դատարան ներկայանաք: Ձեր գործը կլսվի Ձեր հայցը ներկայացնելուց հետո 20 – 70 օրվա ընթացքում:⁴⁰

³⁹Փոքր հայցադիմումներ, Ձեր հայցի կամ ամսաթվի փոփոխում, <http://www.courts.ca.gov/1387.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁰ Փոքր հայցադիմումների դատարան, Հիմունքներ, <http://www.courts.ca.gov/1256.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Ինչպե՞ս կարող եմ վկաներին դատարան կանչել:

Դուք կարող եք վկաներին խնդրել ինքնակամ գալ դատարան: Կամ կարող եք SC-107 ձևաթուղթը ներկայացնել: Քարտուղարը նրանց դատարան ներկայանալու համար ծանուցագիր (որոշում) կուղարկի: Ձևաթուղթը կարելի է տեղակայել այս հղումով՝ <http://www.courts.ca.gov/1017.htm>.

Վկաները կարող են Ձեզնից վճարում գանձել: Փորձագետ չհանդիսացող վկաները կարող են Ձեզնից օրական 35 ԱՄՆ դոլար գանձել, նաև 20 ԱՄՆ ցենտ ճամփորդության յուրաքանչյուր մղոնի համար՝ դեպի դատարան և ետդարձի համար: Փորձագետ վկաների վարձատրությունը մեծ է: Դրամ խնայելու համար Դուք կարող եք փորձագետ վկային խնդրել Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը գրավոր տրամադրել: Սա կոչվում է հայտարարություն:⁴¹

Ինչպե՞ս կարող եմ արձանագրություններ կամ փաստաթղթեր ստանալ՝ իմ գործն ապացուցելու համար:

Ներկայացրեք SC-107 ձևաթուղթը: Քարտուղարը դատարան ներկայանալու ծանուցագիր (որոշում) կուղարկի այն անձին, ով արձանագրություններ ունի՝ բերելու կամ պատճենը դատարանին ուղարկելու համար:⁴²

Ես կարո՞ղ եմ միջնորդությունից օգտվել:

Այո: Իրականում, որոշ դատարաններ պահանջում են, որ Դուք նախ օգտվեք միջնորդությունից (mediation): Միջնորդությունն այն է, երբ վերապատրաստված միջնորդն աշխատում է Հայցվորի և Պատասխանողի հետ՝ փորձելու գործը դատարանից դուրս լուծել: Միջնորդությունը կարող է ավելի արագ և ոյուրին լինել, քան դատարան գնալը: Եվ, միջնորդությամբ քննված գործերի 80%-ը լուծվում են դատարանից դուրս:

Եթե ցանկանում եք օգտվել միջնորդական ծառայություններից, ապա փոքր հայցապահանջների խորհրդատուից խնդրեք օգնել Ձեզ

⁴¹ Փոքր հայցադիմումների դատարան, վկային դատարան կանչելը, <http://www.courts.ca.gov/11162.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴² Փոքր հայցադիմումների դատարան, դատարան գնալը, <http://www.courts.ca.gov/1013.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

միջնորդ գտնելու: Միջնորդության օր խնդրեք, որը կնշանակվի Ձեր փոքր հայցապահանջի դատավարության ամսաթվից առաջ: Այդպիսով եթե միջնորդությամբ հարցը չլուծվի, Դուք կկարողանաք դատարան գնալ Ձեր դատավարության նշանակված ամսաթվին: date.⁴³

Ինչպե՞ս է գործում միջնորդությունը:

Եթե ցանկանում եք գործը լուծել միջնորդությամբ, փոքր հայցադիմումների խորհրդատուին խնդրեք Ձեզ ծանոթացնել միջնորդի հետ: Այնուհետև, Դուք պետք է կապվեք միջնորդի հետ, իսկ միջնորդը պետք է կապվի Պատասխանող(ներ)ի հետ: Եթե երկու կողմն էլ համաձայնի միջնորդությանը, Դուք չեզոք վայրում կփորձեք լուծել Ձեր խնդիրը: Միջնորդը կբացատրի այն գործընթացը, որից նա պետք է օգտվի: Այն, ինչ Դուք կասեք միջնորդությանը գաղտնի կմնա: Տեղեկատվությունը, որը Դուք կիմանաք միջնորդության միջոցով, դատարանում ընդունելի չէ: Փաստաբանները կարող են մասնակցել միջնորդությանը:

Շատ միջնորդություններ մի քանի ժամ են տևում: Եվ եթե Դուք կարողանաք միջնորդության ընթացքում համաձայնությունն ձեռք բերել, միջնորդը կօգնի Ձեզ համաձայնությունը ձևակերպել գրավոր: Եթե Պատասխանողը չհետևի համաձայնությանը, Դուք կարող եք դատարանին խնդրել դրա հարկադիր կատարումը:⁴⁴

Ի՞նչ տեղի կունենա, եթե Պատասխանողը և ես համաձայնենք գործը լուծել նախքան լսումը:

Պարզապես *Request for Dismissal* ձևաթուղթը քարտուղարին ներկայացրեք: Ձևաթուղթը կարելի է գտնել՝ <http://www.courts.ca.gov/1017.htm>: Կամ գնացեք լսմանը և դատավորին տեղեկացրեք, որ Դուք լուծել եք Ձեր խնդիրը:

Ի՞նչ է տեղի ունենում լսմանը:

- 30 րոպե շուտ դատարան ներկայացեք:

⁴³ Փոքր հայցադիմումների դատարան, միջնորդություն, <http://www.courts.ca.gov/1011.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.):
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁴ *Id.* [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

- Ձեր վկաներին, ստացականները և որևէ այլ անհրաժեշտ ապացույց բերեք՝ Ձեր գործը հաստատելու համար:
- Երբ դատավարության դահլիճը բացվի, տեղեկացրեք քարտուղարին ներկայանալու մասին:
- Նայեք այլ գործերը, որպեսզի հասկանաք, թե ինչ է պետք անել:
- Երբ հայտարարվի Ձեր անունը, մոտեցեք դատավորի սեղանին:
- Դատավորը կլսի երկու կողմին: Դատավորը Ձեր գործով որոշում կկայացնի կամ ավելի ուշ այն փոստով կուղարկի Ձեզ: later.⁴⁵

Լսումից հետո

Ինչպե՞ս պետք է պարզեմ դատարանի որոշումը:

Դատարանը Ձեզ կհանձնի կամ փոստով կուղարկի «Notice of Judge's Decision, SC-130 և SC-200»-ը: Այս ձևաթղթում կնկարագրվի դատավորի որոշումը: Կարևոր է ամբողջությամբ կարդալ դատարանի որոշումները, իսկ հետո ձևաթուղթ SC-200-INFO-ը, որովհետև այն կպաշտպանի կամ օրենքով կհարկադրի Ձեր իրավունքները՝ անկախ նրանից Դուք կշահեք, թե կպարտվեք:

Դատավորը կարող է մեկ կողմին հրահանգել վճարել մյուս կողմին: Այդ դեպքում այն անձը, ով պարտավոր է վճարել, դատավճռի պարտապան (judgment debtor) կհամարվի: Այն անձը, ով դրամն ստանա, դատավճռի պարտատեր (judgment creditor) կհամարվի:⁴⁶

Եթե ես գործը շահեմ, որքա՞ն ժամանակում դրամս կստանամ:

Դուք պետք է 30 օր սպասեք (բողոքարկման ժամանակաշրջան)՝ նախքան փոխհատուցվելը:

Դատարանն իմ փոխարեն դրամը կստանա՞:

Ոչ: Բայց կան բաներ, որոնք Դուք կարող եք կատարել՝ վճարվելու համար: Կարդացեք SC-130-ը՝ հավելյալ տեղեկություններ ստանալու

⁴⁵ Փոքր հայցադիմումների դատարան, Ձեր դատավարությունը, <http://www.courts.ca.gov/1119.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.):

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁶ Փոքր հայցադիմումների դատարանի Զայցվորի հետո ստուգացանկ (Small Claims Court, Plaintiff's Post Trial Checklist), <http://www.courts.ca.gov/1120.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

համար: Դուք կարող եք այդ ձևաթուղթը գտնել այստեղ՝ <http://www.courts.ca.gov/documents/sc130.pdf>.

Պատասխանողը կարո՞ղ է դատավորի որոշումը բողոքարկել:

Այո: Միայն պատասխանողը կարող է բողոքարկել: Բողոքարկման համար նրան տրամադրվում է 30-օրյա ժամկետ՝ «Notice of the Judge's Decision» (ձևաթուղթ SC-130)-ը ստանալուց հետո:

Փոքր հայցադիմումների բողոքը կոչվում է "*trial de novo*" կամ «նոր դատավարություն»: Սա նշանակում է, որ կրկին պետք է քննվի և որոշումը կայացվի նոր դատավորի կողմից, ուստի Դուք պետք է Ձեր գործը նորից ներկայացնեք: Քանի որ այս գործը գտնվում է Գերագույն դատարանի քաղաքացիական բաժնում (Civil Division of the Superior Court) (և ՈՉ փոքր հայցադիմումների դատարանում), Ձեզ (և մյուս կողմին) թույլատրվում է փաստաբան բերել՝ նոր դատավարությունում Ձեզ ներկայացնելու համար:⁴⁷ Գործը բողոքարկման փուլում գտնվելու ընթացքում Պատասխանողը չպետք է վճարի վճռի համար:

Հայցվորը չի կարող բողոքարկել նրա հայցը: Բայց Հայցվորը կարող է բողոքարկել Պատասխանողի հայցը, եթե պարտվի:⁴⁸

Հավելյալ օգնության կարիք ունե՞ք:

Ո՞ւմ կարող եմ դիմել օգնության համար:

Խորհրդակցեք Ձեր վարչաշրջանի փոքր հայցադիմումների խորհրդատուի հետ: Խորհրդակցությունն անվճար է:

Ձեր վարչաշրջանում խորհրդատու գտեք՝ <http://www.courts.ca.gov/9498.htm>

Դուք նաև կարող եք օգտվել Contra Costa վարչաշրջանի վիրտուալ ինքնօգնության կայքէջից այստեղ՝ <http://cc-courthelp.org>, որը Ձեզ

⁴⁷ Փոքր հայցադիմումի դատարան, բողոքներ՝ (Small Claims Court, Appeals) <http://www.courts.ca.gov/1016.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁸ Գործողությունները՝ Ձեր փոքր հայցադիմումի գործով դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո՝ (What To Do After the Court Decides Your Small Claims Case) <http://www.courts.ca.gov/documents/sc200info.pdf> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

կուղղորդի փոքր հայցադիմումների դատական գործի հարուցման յուրաքանչյուր քայլին: Այցելեք այդ կայքէջ և հետո սեղմեք փոքր հայցադիմումների սյունատին:

Բացի այդ, դատարանի քարտուղարները կարող են երբեմն օգնել Ձեզ՝ պատրաստելու ձևաթղթերը և պատասխանելու տեղական դատարանների ընթացակարգերին վերաբերող հարցերին: Բայց նրանք փաստաբաններ չեն և չեն կարող իրավաբանական խորհրդատվություն տրամադրել:

Մշտապես փորձեք դատարանի քարտուղարների հետ դրական հարաբերություններ պահպանել: Նա կարող է օգնել Ձեզ՝ ավելի արագ Ձեր գործն առաջ տանելու՝ Ձեր գործը այնպիսի դատավորի նշանակելու, ով գործերն արագ է լսում:⁴⁹

Ի՞նչ տեղի կունենա, եթե ես անզլերեն լավ չեմ խոսում:

Դատարանի քարտուղարին Ձեր լսումից առնվազն մեկ (1) շաբաթ առաջ հարցրեք՝ պարզելու, թե արդյոք դատարանը կարող է Ձեզ թարգմանիչ տրամադրել: Որոշ դատարաններում, նրանք կարող են անվճար թարգմանիչներ տրամադրել, եթե Դուք վճարումից հրաժարման իրավունք ունեք: Եթե ոչ, Դուք պետք է Ձեր թարգմանչին Ձեզ հետ տանեք: Որևէ երեխայի կամ վկայի չիսնդրեք թարգմանել Ձեզ համար: Դուք իրավունք ունեք հետաձգել Ձեր լսումը, որպեսզի կարողանաք թարգմանիչ գտնել:

Խնդրում ենք նայել [«Ինչպես օգտվել դատարանի թարգմանչից»](http://www.courts.ca.gov/documents/Tri-CutUseInterpreter.pdf) (How to Use a Court Interpreter) գրքուկը, որը մատչելի է այստեղ՝ <http://www.courts.ca.gov/documents/Tri-CutUseInterpreter.pdf>.⁵⁰

Որտեղի՞ց կարող եմ ստանալ ինձ անհրաժեշտ դատարանի ձևաթղթերը:

Գնացեք որևէ դատարան, Ձեր վարչաշրջանի իրավաբանական գրադարանը կամ ձևաթղթերը ներբեռնեք այստեղից՝ <http://www.courts.ca.gov/1017.htm>

⁴⁹ Փոքր հայցադիմումներ <http://www.courts.ca.gov/selfhelp-smallclaims.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵⁰ Փոքր հայցադիմումների դատարան, դատարան գնալը (Small Claims Court, Going to Court), <http://www.courts.ca.gov/1013.htm> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Ինչպե՞ս վարվել, եթե ես հարմարեցման կարիք ունեմ:

Կալիֆորնիայի և դաշնային օրենքները պահանջում են, որ նահանգային դատարանները (և պետական գործակալությունները) համապատասխան պատշաճ հարարեցումներ տրամադրեն հաշմանդամ մարդկանց համար: Եթե Դուք հաշմանդամություն ունեք և աջակցության կարիք ունեք, լրացրեք MC-410, Request for Accommodations by Persons with Disabilities and Order ձևը: Թուղթը (տեղադրված է այստեղ՝

<http://www.courts.ca.gov/documents/mc410.pdf>): Հարմարեցումները պետք է Ձեզ տրամադրվեն անվճար:

Ձեր խնդրանքը ներկայացրեք հայցը ներկայացնելուց անմիջապես հետո և դատավարությունից առնվազն մեկ շաբաթ առաջ, որպեսզի դատարանը Ձեր կարիքները բավարարելու համար ժամանակ ունենա:

Հարմարեցումների օրինակները ներառում են՝

- Ժեստերի լեզվի թարգմանիչ.
- Աջակցություն մեկ այլ անձի կողմից (օրինակ՝ փաստաբանի), եթե պահանջվում է հաշմանդամության պատճառով)
- Ծառայություն տրամադրող կենդանու մուտքի թուլյտվություն.
- Մատչելի ձևաչափերով կյանքի ստացում.
- Հեռախոսով ներկայանալու իրավունք, եթե Դուք չեք կարող դատարան հասնել Ձեր մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության պատճառով:⁵¹

Դատարանի հարմարեցումների մասին հավելյալ տեղեկությունների համար դիմեք Disability Rights California և խնդրեք հետևյալ հրապարակումները՝ Մուտք դեպի դատարաններ Հաշմանդամ անձանց պատշաճ հարմարեցումների ուղեցույց (Access to the Courts: A Guide to Reasonable Accommodations for People with Disabilities), Հրատ. # 5026.01

⁵¹ Ձեր դատարանի ծառայությունները (Services at Your Court) www.courts.ca.gov/1077.htm; <http://www.courts.ca.gov/documents/access-fairness-QandA-for-persons-with-disabilities.pdf> (վերջին այցելություն՝ փետրվարի 24, 2015թ.): «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»